

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ 1938

347
- 21

17 MAY 2013

37.281

MAR 2010

347 սր
4-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Գ Լ Ո Ւ Խ Ա

ԴԱՏԱԲԱՆԻ ԿԱԶՄԸ

1. Յուրաքանչյուր դյուզական խորհրդի սահմաններում հիմնվում և գյուղական գաղտարան:

2. Գյուղական գատարանը գործում և նախագահի կամ նրա տեղակալի և ժողովրդական յերկու առենակալարների կազմով:

3. Գյուղական գատարանի նախագահը և նախագահի տեղակալը ընտրվում են գյուղական ժողովականի պլենումի կողմից՝ գյուղխորհրդի անդամներից և հաստատվում են շրջանային Գործադիր Կոմիտեյի կողմից:

4. Ժողովրդական առենակալներն ընտրվում են գյուղի ընտրական իրավունք վայելող քաղաքացիների ընդհանուր ժողովներում՝ 15-ից մինչև 50 հոգի, նայած գյուղի բնակչության թվի, ավագական գյուղի սահմաններում ապրող և չի ԱՀ Սահմանադրության

32.92
38

հիման վրա ընտրական իրավունք վայելող
յերկու սեռի աշխատավորների թվից:

5. Ժողովրդական ատենականիների ցուցա-
կը հաստատում և գյուղխորհրդի պլենումը:

6. Ժողովրդական ատենականիները գյու-
ղական գատարանների նիստերին մտմակ-
ցում են գյուղական գատարանի սահմանած
հերթի կարգով:

7. Գյուղական գատարանի նախագահը,
նրա տեղակալը և ժողովրդական ատենա-
կանիներն ընտրվում են այնքան ժամանա-
կով, փորքան ժամանակով ընտրվում և
գյուղխորհուրդը, լսու փորում նրանց վա-
ղակետ հետ կանչելը կատարվում և գյուղ-
խորհրդի անդամներին հետ կանչելու համար
գոյություն ունեցող կարգով ու հիմունքնե-
րով:

Ծանոթաբայւն.— Գյուղական գատա-
րանների նախագահները, նրանց տեղա-
կանիները և ժողովրդական ատենականիներն
իրենց պարտականությունները կատա-
րում են հասարակական (ձրի) բեռնվա-
ծության կարգով: Գյուղական գատարանն
ոգտվում և գյուղական խորհրդի պարա-
տից:

8. Գյուղական դատարանները քննում են՝
ա) այն քաղաքացիական վեճերը, վորոնց
գինը 75 սուբլուց բարձր չե, և ծխի գույքի
բաժնում ու աշխատավորական հողոգտա-
գործման իրավունքի վերաբերյալ վեճերը.

բ) 25 սուբլումարից վաշ բարձր աշխա-
տավորական վեճերը, վորոնք ծագում են
վարձու աշխատավորների և վարձող աշ-
խատավորների միջի (մենատնտես աշխա-
տավոր գյուղացիական տնտեսությունների,
անայնական արհեստավորների և
այլն), այլ և հասարակական հովիվների և
վարձողների միջև:

Ծանօթաբայւն.— Յատրակների և հո-
վիվների՝ վարձողների հետ ունեցած աշ-
խատավորական վեճերը գյուղական գա-
տարաններում քննվում են հատուկ որհն-
քի համաձայն:

9. Գյուղական դատարանը քննում և հե-
տեւյալ քրեյական գործերը.—

ա) բանավոր, գլուխոր կամ գործողու-
թյամբ վիրավորանք և զպարտություն հաս-
ցնելու մասին:

բ) առանց մարմական վսասվածք պատշառելու հարվածները հասցնելու մասին.

գ) հասարակական անվտանգության և կարգը խանգարելու մասին գործերը, ժողովրդական առողջապահության պահպանության կանոնները խախտելու և վոչ չարամիտ խուլիքանության գործերը.

դ) մենաանտեսների և կողանտեսականների անհատական (չհանրայնացված) գույքի վոչչացման կամ փչացման և փոքր, առաջին անգամ կատարված գողությունների վերաբերյալ գործերը, յեթե պատճառած վնասի չափը 50 ռ. ա. պեկի չե.

յե) այն գործերը, վորոնք կապված են չքավոր և միջակ անտեսությունների պետական և հասարակական առաջազրությունները չկատարելու հետ, յեթե գյուղխորհրդի կարծիքով այդ անտեսությունների զեկավագրների նկատմամբ ավելի նպատակահարմար և կիրառել հասարակական ներգործության միջոցներ, քան յենթարկել նրանց դատական կամ վարչական պատասխանաւովության:

10. Քրեյական գործերի վերաբերմամբ գյուղական դատարանը կիրառում է հետեւյալ միջոցներից մեկն ու մեկը՝

ա) նախազգուշացում.

բ) հասարակական պարսավանք՝ այդ մասին մամուլում հայտարարելով, կամ չհայտարարելով, կամ գյուղական ժողովում հայտարարելով.

գ) գրամական տուգանք՝ 10 ոուբ. վոչ բարձր, վորը հատկացվում և տեղական նշանակություն ունեցող ընդհանուր կուլտուրական ձեռնարկումների և տեղական առանձին հասարակական կազմակերպությունների կարիքներին,

դ) հարկադիր աշխատանքների՝ 5 որից վոչ ավելի ժամանակով:

11. Կանոնադրության 8 և 9 հոդվածներով մատնանշված գործերը գյուղական դատարանը քննում և հետեւյալ կարգով.—

ա) քաղաքացիական գործերը քննում են այն գյուղական դատարանը, վորի շրջանում մշտակես ապրում ե, կամ մշտական գրադաւունք ունի դատակիրը (պատասխանողը).

բ) քըլիյական գործը քննում ե այն գյուղական դատարանը, վորի սահմաններում տեղի յեւ ունեցել արարքը:

Ծանօթարձաւն.—Զանազան գյուղխորհներից սահմաններում ապրող քաղաքա-

ցիների գործերն ու վեճերը կտրող են
քննվել գյուղական գատարանների կողմից,
յերբ շահագրգոված անձը զիմում և այն
գատարանին, վորը գանվում և պատասխա-
նատվության յենթարկվող անձի բնակու-
թյան տեղում:

12. Յեթե գյուղական գատարանը գտնում
է, վոր գործն իր իրավասության յենթակո-
չի, գործն ուղարկում և համապատասխան
գյուղական, կամ ժողովրդական գատարանին
և այդ մասին հայտնում և կողմերին;

Գ Լ Ո Ւ Խ Գ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏՎՈՐԻ (ՆԵԽԱԳԱՀԻ)
ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐԻ
ՄԵՐԺՄԱՆ (ԲԱՑԱՐԿ) ՄԱՍԻՆ

13. Գյուղական գատավորը և ժողովրդա-
կան ատենակալները չեն կարող մասնակցել
գործի քննությանը, յեթե նրանք ուղղակի,
կամ անուղղակի կերպով շահագրգոված են
գործի յելքով, կամ կողմերի հետ ազգակ-
ցական կամ ինաժամական կապեր ունեն, կամ
առանձին հարաբերության մեջ են:

14. Այս կանոնադրության 13 հոդ. մատ-

նանշված առիթները յեղած դեպքում դա-
տավորը կամ ժողովրդական ատենակալները
իրենք պետք են հրաժարվեն գործին մաս-
նակցելուց, այդ դեպքում գյուղական դատա-
վորին փոխարինում են նրա տեղակալը,
իսկ ժողովրդական ատենակալներին—մյուս
ժողովրդական ատենակալները՝ հերթի կար-
գով:

15. Քաղաքացիական գործերում կողմերը
(հայցվոր և զատակիր), իսկ քրեյական գոր-
ծերում առևտողը և մեղադրյալն իրավունք
ունեն բացարկ հայտնիութեան գյուղական
գատավորի (նախագահի) և թե ժողովրդա-
կան ատենակալների գեմ:

16. Պատճառաբանված բացարկը հայտն-
վում և գատական նիստը բանալիս և
քննվում են գործին մասնակցող գատավոր-
ների կողմից, բացարկող անդամի բացա-
կայությամբ: Զայների հավասարության
դեպքում գատարանի տվյալ անդամը համար-
վում և բացարկված:

Գ Լ Ո Ւ Խ Դ

ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏՎԱՔՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Գյուղական գատարանում գործերը
կարող են հարուցվել կողմերի թե բանավոր

և թե գրավոր հայտարարությամբ, նաև շահագրգոված անձանց կամ արհեստակցականու հասարակական կազմակերպությունների հայտարարությամբ:

18. Հայտարարությունները արվում են գյուղական դատարանին նախագահին կամ նրա տեղակալին, բանալոր հայտարարությունն իսկույն մտցվում և արձանագրության մեջ:

Ծանօթուրյաւն.—Գյուղական դատարանին արվող բոլոր հայտարարություններն աղատվում են միամնական պետական տուրքից:

19. Գյուղական դատարանում ստացված ամեն մի գործ պետք և լուծվի ստացվելուց հետո՝ Շորվա ընթացքում, բացի աշխատանքային գործերից, վորոնք պետք և լուծվեն Յ որվա ընթացքում:

20. Գործը լսելու որվա մասին գյուղական դատարանում հայտարարություն և կախվում և կողմերին ու վկաներին տեղեւկություն և արվում գյուղակարհրդի (գյուղատարածուների) միջոցով:

21. Գործի դատաքննությունը տեղի յեւ ունենում դռնբաց և բերանացի:

22. Նիստը բանալուց հետո նախագահը կողմերին, ինչպես նաև մեղագրյալին բացատրում է, վոր նրանք իրավունք ունեն բացարկ հայտնել թե գյուղական դատավորի և թե ատենակալների գեմ:

23. Գյուղական դատարանը պարզում է, թե կողմերից, վկաներից և գործին մասնակցողներից ովկ և ներկայացել նիստին և վճռում է՝ կարելի՞ յեւ գործն այդ պայմաններում լսել թե՝ վոչ:

24. Կողմերի առանց հարգելի պատճառների չներկայանալը չի կասեցնում գործի դատաքննությունը, յեթե դատարանը նրաց ներկայանալը անհրաժեշտ չի համարում:

25. Վկաների կամ գիտակ անձաց առանց հարգելի պատճառների (հիվանդություն, գյուղից բացակայություն և այլն) չներկայանալու դեպքում գյուղական դատարանը կարող է նրանց տուգանել մինչև յերեք ուուրի:

26. Վիրավորանքներ և հարվածներ հասցնելու կամծեծելու գործեր (Զ-րդ հոդ, «ա» և «բ» կետերը) քննելիս, տուժողի չներկայանալու դեպքում գործը կարճվում է, սակայն մեղագրյալն իրավունք ունի խնդրե-

լու, վոր գործն ըստ եյության քննվի: Յուշ
բաքանչյուր այդպիսի գեպքում գյուղական
դատարանը պարտավոր ե գործը քննել:

27. Քաղաքացիական գործերում կողմերը
(հայցվոր և զատակիր), ինչպես նաև քրեյտա-
կան գործերում տուժողը և մեղադրյալը
պետք ե ապացուցեն այն հանգամանքները,
վորոնց վրանրանք հիմնվում են, մասնավոր-
ապես՝ հայցվորը պետք ե ապացուցի իր
պահանջի հիմքը և չափը:

28. Գործի վերաբերյալ ապացույցներ
կարող են ծառայել վկաների ցուցմունքնե-
րը, ամեն տեսակ զրավոր փաստաթղթերը,
գիտակ անձանց յեզրակացությունները և
իրային ապացույցները:

29. Այս կամ այն ապացույցները ընդու-
նելլ գորոշում և գյուղական դատարանը,
նայած թե տվյալ ապացույցը գործի համար
եյական նշանակություն ունի, թե՞ վոչ:

30. Գյուղական դատարանը նաև իր նա-
խաձեռնությամբ կարող է ապացույցներ
հարցաքել այն և հարցաքննել վկաներին
ու գիտական անձանց, պահանջել այս կամ
այն փաստաթղթերը, զննություն կատա-

րել և այն, յեթե նա այդ ամերաժիշտ և
համարում:

31. Վկաներին հարցաքննելուց առաջ
դատարանը պարզում ե կողմերի և վկանե-
րի փոխհարաբերությունը, ինչպես նաև
նախազգուշացնում ե վկաներին, վոր սուտ
վկայություն տալու համար նրանք պատաս-
խանատու չեն ժողովուրական դատարանի
առաջ:

32. Վկաները, հարցաքննվելուց առաջ, չեն
կարող ներկա լինել գործի քննության:

33. Յեթե քաղաքացիական գործերում
կողմերից մեկին հայտնի յե, վոր վկան շա-
հագրգուված և գործի յելքով, կամ վկայի
և կողմի միջի հատուկ փոխհարաբերություն
ուղյություն ունենալու դեպքում, գյուղական
դատարանն իր հայեցողությամբ կարող է
հարցաքննել կամ հարցաքննել այդ վկային:
Բրեյական գործերում թույլ ե արվում հար-
ցաքննել վկաներին, անկախ կողմերի և
վկաների փոխհարաբերությունից:

34. Գյուղական դատարանը գործը, կող-
մերի հայտարարության հետևանքով, կա-
րող է կարճել միայն այն գեպքում, յերբ
այդ հաշտությունը չի հակասում գործում

մասնակցող տնտեսապես թույլ կողմերի շահերին:

35. Յերբ գյուղական գատարանը գտնում է, վոր գատական քննությամբ գործը բավականաչափ պարզված է, հեռանում է խորհրդակցության և վորոշում և կայացնում: Խորհրդակցության ժամանակ կողմանակ անձիք չեն կարող ներկա լինել:

36. Գյուղական գատարանը գործի վերաբերյալ կազմում և համառոտ արձանագրություն, վորը պետք և պարունակի:

ա) արձանագրությունը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

բ) գատավորների անունները և ազգանունները.

գ) հայցվորի և գատակրի, կամ տուժողի և մեղադրյալների անունները և նրանց սոցիալական դրությունը.

դ) վկանների համառոտ ցուցմունքները.

յի) գյուղական գատարանի վորոշումն՝ առանց պատճառաբանության.

37. Գյուղական գատարանի վորոշումը կայացվում է ձայների մեծամասնությամբ. գատավորներից վոչ վոք չի կարող ձեռն-

պահ մնալ. յուրաքանչյուր գատավոր կարող է հայտնել իր առանձին կարծիքը, վորը չի հայտարարվում, առկայն կցվում է արձանագրությանը: Փողովրդական ատենակալի անդրագիտության գեպքում՝ նախագահն ինքն և ձեւակերպում նրա կարծիքը, վորը կցվում է արձանագրությանը:

38. Վորոշումը ստորագրվում է գատարանի կազմի կողմից և հայտարարվում է դռնբաց նիստում: Ժողովրդական ատենակալի անդրագիտության գեպքում՝ նախագահն ինքն և ստորագրում նրա փոխարեն, այս մասին համապատասխան հիշատակություն անելով արձանագրության մեջ:

Գ Լ Ո Ւ Խ Յ Ե

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄ-ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

39. Գյուղական դատարանների վորոշումները վերջնական են և անմիջապես ի կատար են ածվում:

40. Գյուղական դատարանի վորոշումը կարող է հակողության կարգով փոխվել ըլանային ժողովադարանի կողմից:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՅԵԿ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՀԱՆԳՈՒՄԸ

41. Գյուղական դատարանների վորոշումների կատարումը քաղաքացիական գործերի վերաբերյալ սեղմանը կատարած կազմական կատարածուների վրա, կատարման համար տրվում ե գյուղատարանի վորոշման պատճենը, վորը կատարողական թերթի ուժունի:

Թրեջական գործերի վերաբերյալ վորոշումները, վորոնց հիման վրա պես և տուգանք գանձել կամ հարկադիր աշխատանքներ նշանակել ի կատար են ածվում գյուղելորդողների կողմից, վորոնց կատարման գործողություններն ավարտելուց հետո վճռի պատճենը համապատասխան մակագրությամբ վերադարձնում են գյուղական դատարաններին:

42. Գյուղական դատարանների ընդհանուր ղեկավարությունը գրվում ե Գերա-

գույն դատարանի վրա:¹ Գյուղական դատարանների գործունեյության հսկողությունն իրագործում են ժողովրդական դատարաններն ու դատավայրությունը:

43. Այս կանոնագրության հրատարակմամբ վերացվում են ՀԽՍՀ Կենտղործկոմի՝ 1927 թ. սեպտեմբերի 18-ի «Գյուղխորհուրդներին առընթեր դատական սեկցիաներ հիմնելու մտսին» փորոշումը («Ար. և Կարգ. Ժող.» 1927 թ. № 14 հոդ. 94), ինչպես նաև ՀԽՍՀ Արդժողովատի 1927 թ. հոկտեմբերի 1-ի, Կենտղործկոմի՝ «Գյուղխորհուրդներին առընթեր դատական սեկցիաների հիմնելու վերաբերյալ վորոշումը կիրարկելու մասին» հրահանգը («Ար. և Կարգ. Ժող.» 1927 թ. № 14, հոդ. 95):

¹ Ներկայումս, համաձայն Հայկական ԽՍՀ Արդարադատության փողովրդական Կոմիսարիատի կանոնադրության՝ գյուղական դատարանների վործունեցության ղեկավարումն ու հսկողությունը դրվագ է Հայկական ԽՍՀ Արդժողովատի վրա:

023

Գետհամալսարանի Հրատարակչության տպարան
Գլավլիս № 3509, պատ. № 241, տիրաժ 1500

«Ազգային գրադարան



NL0221348

270

37.281